


է մարդկանց մէջ կրօնական համոզումն մտցնել. և եթէ յաջողուի էլ մարդկանց բռնի կերպով որ և է եկեղեցու ծոց քշել, այդ եկեղեցին կը գադարի բառի բռն նշանաշ կութեամբ եկեղեցի լինելուց, քանի որ նրա անդամները զուտ հաւատացեալներ չեն լինին. Միմիայն այնտեղ է եկեղին ընդգրկում իսկական—զուտ հաւատացեալների, ուր հաւատալու կամ չհաւատալու, ուրիշ խօսքով՝ խղճի կատարեալ ազատութիւն է տիրում. և միմիայն այդպիսի տեղում է, որ եկեղեցին ներկայանում է իսկական—անկեղծ հաւատացեալների հասարակութիւն—ժողով. այն ինչ որ պէտք է լինի.

Հ. Յովակիմեան.



ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե.

Հայ կրօնաւորութեան զեղծ կեանքը. Մեծն ներսէս իւ Ս. Յանձնականութիւնների տեսակները. Կրօնաւորական հաստատութիւնների տեսակները. Ս. Յանձնականութիւնների աղբիւրը: Ներսէսի բարեկարգութեան նետեանները «Ժագումն հայ վանականութեան» ըստ Յ. Թոփինեանի: Աստուածածութեան ժամերը:

Հաւանօրէն Հայաստանի կրօնաւորները մինչև Մեծն ներսէս որոշ կարգ կանոն չունէին» նրանք կամասարի խոտաճարակների պէս անմարդաբնակ տեղերում ցաք ու ցրիւ էին ապրում կամ Եւստաթէոսի հետեւզների պէս կրօնաւորի սքեմով գիւղերում ու քաղաքներում հետզ հետէ մոռանալով և կրօնաւորութեան մաքուր կենցաղը զեղծ կեանք էին վարում: Կրօնաւորութիւնը որոշ կազմակերպութիւն ստացաւ Դ. գարի Բ. կէսին ներսէս մեծի հայրապետութեան օրով:

Ա. Ներսէս մեծը, որ 364 թուին հայրապետական գահ բարձրացաւ, հետեւեալ 365 թուին Արշակ թագաւորի հաւանութեամբ գումարեց Աշտիշատի ժողովը¹⁾: Այս ժողովը շատ նշանաւոր է իւր սահմանած կանոններով, որոնք ընդգծում են քրիստոնէական առաքինութիւնները ընդարձակ չափերով, առաջնորդուած մարդասիրական սկզբունքներով:

Ժողովի առաջին կանոնը արգելում է մերձաւոր ազգականների մէջ ամսւանութիւնը, որին դիմում էին մասնաւանդ նախարարական տները իրանց ժառանգութիւնը իրանց տոհմի մէջ պահպանելու համար: Երկրորդ կանոնը արգելում է ննջեցնալների վերայ հեթանոսաբար կոծանելը, պէս պէս ոճիրներն ու անկարգ գործերը: Երրորդ կանոնը սահմանում է շինել բորոտների համար ուրկանոցներ, աղքատ հիւանդների համար հիւանդանոցներ և կաղերի ու կոյրերի համար անկելանոցներ, որովհետեւ փոխադրական և վարակիչ հիւանդութիւն ունեցողներին այդ ժամանակ քաղաքներից ու դիւղերից դուրս էին անում: Չորրորդ կանոնը սահմանում է այրիանոցներ և որբանոցներ շինել, օրովհետեւ անխնամ մնալով՝ որբերը անձնատուր էին լինում գողութեան, իսկ այրիները՝ անկարգութեան: Հինգերորդ կանոնը սահմանում է հիւրերի և օտարների համար քաղաքներում ու դիւղերում հիւրանոցներ հաստատել:

Երրորդ, չորրորդ և հինգերորդ կանոններով սահմանած բարեգործական և մարդասիրական հաստատութիւնները ապահովելու և նրանց պէտքերը հոգալու համար սահմանեց ստանալ կալուածներից, դիւղերից ու ագարակներից հաս, իսկ քաղաքներից՝ տուրք:

Մեր ձեռնարկութեան համար կարևոր է Աշտիշատի ժողովի վերջին—վեց երրորդ կանոնը: ահա այն.

«Վեցերորդ, կրօնաւորք այնը ժամանակի սկսեալ էին

1) Զամէ, Հայոց պատմ. հատ. Ա. գլ. ԽԳ. եթ. 440—441: Մովս. Խոլին, դիրք Գ. գլ. ի. Փաւստ. Բիւզ. դալ. Դ. գլ. Գ:

դատարկաշրջիկը լինել և ումանք ի նոցանէ նստէին ի տունս աշխարհականաց ի քաղաքի. և բազումք հանապազօրեայ ի գեօղն բնակէին իբրև ի վանս «Այսմ կամելով դարման տանել հրամայեաց (Ներսէս) շինել զերիս դասս բնակու կութեան կրօնաւորաց յանապատ տեղիս. առաջին զեղ բայրանոցս կամ վանս միաբանակեաց կրօնաւորաց (Ելլարիոնի պէս) երկրորդ զմիայնանոցս, այսինքն այնպիսի վանս, յորում թէպէտ և բազումք բնակէին, բայց առանձինն ճգնէին, երրորդ՝ զառանձնակեցաց խրճիթս բազումք (Եղիպտացոց սկիթների պէս) և յամենայնի ի սոսա կարգեաց կանոնաց:

Մովսէս Խորենացին այս տեսակ կրօնաւորական հաստատութիւնները անուանում է եղբայրանոց, մենաստանին յատկանձնակաց խրճիթ. — «Շինէ (Ներսէս) յանապատ և և յանմարդ տեղին եղբայրանոցս և մենաստանս և յատկանձնակաց խրճիթս»¹⁾,

Խորենացին նոյն տեղում գրում է. «Մեծն Ներսէս... եկեալ ի Հայս զամենայն կարգս ուղղութեանց հարցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս. քանզի զբարեկարգութիւնն, զոր ետես ի յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքն, ի սմա նկարագրէ. Փողով արարեալ... Այստեղ առանց առանձին յօդուածների յիշում է այն բոլորը, ինչ որ Աշտիշատի ժողովի անունով որոշ յօդուածների է վերածուած. Այսպիսով, ըստ մեզ, Աշտիշատի ժողովի կանոնների խմբագրութեան աղբիւրները եղել են Փաւստոս Բիւզանդ և Մովսէս Խորենացին».

Վանական և կրօնաւորական կանոնների մէջ մենք տեսնում ենք, որ Ներսէսը ծանօթ էր Անտոն անապատականին հետևող եղիպտական կրօնաւորների և ճգնասորների, Իլլարիոնի հաստատած Պաղեստինի վանականների և ս. Բարսեղի միայնակեացների կարգերի հետ Ներսէսի պէս մարդը ապրելով Յունաստանում, ընկեր լինելով ս. Բարսեղ Կեսարացուն և Դրիգոր Աստուածա-

1) Մովսէս, Խոր. գիրք Գ., գլ. իւ.

բանին, չեր կայսղ անտարբեր գտնուել դէպի քրիստոնէական այնպիսի հաստատութիւնները, որպիսիք են եղբայրանոցները կամ համաքնակների վանքերը, միայնանոցներն ու առանձնակեացները, որոնք, չենք սխալուի, եթէ ունենք քրիստոնէական եկեղեցու մէջ առաջին տեղն էին ըռնում, որպէս բարեպաշտական հաստատութիւններն ենրսէսի բարեկարգութեամբ այս հաստատութիւնները ոչ միայն բարեպաշտական, այլ և մարդասիրական հաստատութիւն են դառնում որպէս ազաստանարան անկեալների, ասպնջարան օտարականների, պատսպարան աղքատների, տնանկների, որբերի և այրիների, և որպէս հիւանդանոց այնպիսի ախտաւորների, որպիսի են բորոտներն, ուրուկները, ևն, որոնք մերժում էին քաղաքներից ու գիւղերից իբրև վարակիչ հիւանդութիւն ունեցողներ։ Օտարերկրեայ նմանօրինակ հաստատութիւնների մէջ պակասում էր մարդասիրականը, և ներսէսը գերազանցեց Հայաստանում բարեպաշտական հաստատութիւններին բարեգործական և մարդասիրական ուղղութիւն տալով, և որ գլխաւորն է, ապահովելով այդ հաստատութիւնները հաստատուն եկամուտներով։

Ներսէսը կեսարիայում երբ ձեռնադրուում էր Եւսերիսսից, ո. Բարսեղն էլ ներկայ էր ձեռնադրութեանը որպէս երէց։ Ներսէսը իւր ընկեր Բարսեղի վանական հաստատութիւնների հետ լաւ ծանօթանալով նոյնը ներմուծեց և Հայաստանում, որով Հայաստանի կրօնաւորներն ու վանականները թէ և ո. Բարսեղի հետեւող կոչուեցին, որպէս և նկատուած է Հայոց եկեղեցու կառավարութեան համար սահմանուած ռուսաց օրինագրուում⁽¹⁾ բայց այդ հետեւողութիւնը արտաքին ձեռվ է. Բարսեղի վանքերի մէջ մենք տեսնում ենք բարեպաշտութիւն, բայց բարեգործութիւն ու մարդասիրութիւնը որպէս կարգի և կանոնի վերածուած՝ չենք տեսնում։

Ներսէսը վանական և կլօնաւորական հաստատու-

1) Сводъ законовъ. томъ одицнцатый, часть I. յօդ. 1197.

թիւնների վերայ հայր և տեսուչ է կարգում Շաղիտային, Եպիփանին, Եփրեմին և Դինդ Ալկունուն¹⁾; Իսկ մարդասիրական և բարեգործական հաստատութիւնների վերայ իւր սարկաւագապետ Խաղդդին, «որ էր ի մարդաց Կարնոյ»: Մովսէս Խորենացին Ներսէսի այս բարեկարգութեան նկարագրութիւնը վերջացնում է հետեւալ բառերով. «Եւ էք այնուհետեւ տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս բարբարոսս, այլանդակեալս, այլ որպէս դքաղաքացիս համեատացեալս»:

Պ. Յ. Թօփիճեանը «Ճագումն հայ վանականութեան»²⁾ յօդուածում ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ եկեղեցին մեծ առընչութիւն ունէր կապագովկիայի աթոռի հետ ո. Լուսաւորչի և նրա յաջորդներից մի քանիսի այնուեղ ձեռնադրուելով և այն աւանդութիւնը, որ ո. Լուսաւորիչը կեսարիայից ձեռնադրուած վերագաւնալիս հայ կրօնաւոր է բերել՝ կարծում է, որ հայ կրօնաւորութիւնը յունական ծագումն ունի: Մենք աւելի համակարծիք ենք մեր միաբանակից Երուանդ սարկաւագին (այժմ վարդապետ) հայ կրօնաւորութեան ծագումն ասուրական համարելով. որովհետեւ ճգնաւորութիւնն ու կրօնաւորութիւնը հետը հաշուելով և վանականութիւնը Եգիպտոսից հետզհետէ անցաւ Պաղեստին, Ասորիք և Հայաստանի սահմանով՝ Փոքր-Ասիա: Փոքր-Ասիա ներմուծողն էր մեծն Բարսեղ, երբ ըստ պատմութեան, կրօնաւորութիւնը Հայաստանում սկսել էր արդէն թուլանալ զեղծ կերպարանք ընդունել և մեծն Ներսէս հայրապետական աթոռը բարձրանալով առաջին գործը համարեց բարեկարգել կրօնաւորութիւնն ու վանականութիւնը Հայաստանում:

Առնելով Զենոր Գլակից ընդհանրապէս ընդունած է կարծել, որ ո. Լուսաւորիչը կապագովկիայից յոյն կրօնաւ

1) Մովս. Խորենացի գիրք Պ. դլ. ի:

2) Լոյս շաբաթաթերթ. 9 ապրիլ. թ. 15, 7 և 28 մայիսի թ.թ. 19 և 22, 1905 ամիս:

առներ բերեց, և այդ կրօնաւորնին կառավարելու համար հրահանգութիւն ստացաւ Կեսարիայի, իւր ձեռնադրող Դեսոդ հայրապետից¹⁾, սակայն որովհետեւ արդէն հաստատուած է, որ Զենոբը յետին ժամանակի գրիչ է, դժուար չէ համարձակօրէն ասել, որ նրա առաջ բերած հրահանգութիւնը խմբագրուած է մեծն ներսէսի գումարած Աշտիշատի ժողովի կանոնների հետեւողութեամբ։ Մեր պատմիչներից Ագաթանգեղոսը, Փաւստոսը, Մովսէս Խորենացին չեն յիշում, թէ ս. Լուսաւորիչը Կեսարիայից կրօնաւորներ բերեց, ընդհակառակն, ասորական ծագմամբ կրօնաւորների մասին նրանք բաւական տեղեկութիւններ են տալիս։

Ագաթանգեղոսը ս. Լուսաւորիչը Կեսարիայից վերադարձը այսպէս է նկարագրում²⁾ «Մեծապատռով և թղթով և ժողովով զոռւրբն Դրիգոր անդուստ (ի Կեսարիայէ) ուղարկեցին իշխանօք հանդերձ, տուեալ ողջոյննեւ յուղի անկեալ անտի շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ գային հասանէին ի քաղաքն Սեբատացւոց, և անդ յեցան յերեկօթո՞ աւուրս ոչ սակաւա եւ անդտեսանէր բազմութիւնն եղբարց՝ զորս հաւանեցուցանէր զնոսա ընդ իւր գնալ. զի վիճակեցուացէ զնոսա ի քահանայութիւն յիւրում աշխարհի»։

Այս հատուածից երեսում է, որ ս. Լուսաւորիչը Աերաստիայից է եղբայրներ, այսինքն վանականներ բերել, որ նրանցից քահանաներ, այսինքն աշխարհիկ հոգեորականներ կարգի Հայաստանում։ Այստեղ Կապադովիլիայի և այն ևս յոյն կրօնաւորների մասին խօսք չը կայ։ Սեբաստիայից բերած եղբայրները կարող էին ազգով հայտառի և մասամբ յոյն լինել, որովհետեւ այդ քաղաքը համարուելով հանդերձ հայ եպիսկոպոսական աթոռ, գտնուում էր Հայաստանի, Ասորիքի և Փոքր Ասիայի սահ-

1) Զենոբ Գլակ, պատճէն երկրորդ և պատասխանի թղթոյն սրբայն Գրիգորի . . .

2) Ագաթանգ. 248.

մանի վերայ և խառն բնակչութիւն ունէր։ Մեր յիշած պատմիչները յսին կրօնաւորների մասին լսելով՝ դրում են, որ ս. Լուսաւորչի աշակերտ Դանիէլ ծերտւնին ասորի էր¹⁾ սրա աշակերտ Շաղիտան նոյնպէս ասորի էր²⁾։

Մենք չը գիտենք թէ պ. Յ. Թօփճեանը Ադաթանագեղոսի որ տպագրութիւնն է ունեցել ձեռքի տակ, որ գրելով, «Երբ Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիայէն վերագարձաւ, յոյն հոգեսրականներու բազմութիւն մը բերաւ հետք», աղբիւր է ցոյց տալիս Ադաթանագեղոսի 101 էջը՝ եթէ այդ, մեր մէջ բերածն է, այդտեղ ոչ թէ «յոյն հոգեսրականներու բազմութիւն» այլ մի յոյն հոգեսրականի մասին ևս յիշատակութիւն չը կայ։ Դուցէ «Մեծաւ պատուով և թղթով և ժողովով . . .» խօսքերի մէջ ժողովով բառը հասկացել է «յոյն հոգեսրականներ ու բազմութիւն մը»։ Սակայն այդ բազմութիւնը եթէ յոյն էլ լինէր, ժողովուած էր ս. Գրիգորին ուղարկելու և ոչ ուղեկցելու։ Հայաստանի կրօնաւորութեան վերաբերութեամբ միւս կէտերում մեր և պ. Յ. Թօփճեանի կարծիքների մէջ տարբերութիւն չը կայ, եթէ կայ էլ, աննշան է։

Կրօնաւորների աստուածապաշտութեան կամ ժամակարգութեան մասին Դ. Պարում՝ ոչինչ որոշ չենք կարող ասել։ Հայերէն գիր ու գպլութիւն չը կար, ուրեմն ժամերգութիւնը հայերէն չէր կարող լինել, յունարէն էր և առուրերէն։ Հայաստանը բաժանուած էր երկու մասի յունաց բաժնում բնականաբար զօ՞նեղ էր յոյն տարրը և յունական ազգեցութիւն, պարսկական բաժնում՝ ասորականը։ Հասարակաց ազօթքի ժամերի մասին գիտենք՝ որ առաւ շատեան ժամերգութիւնը կար. Փաւստոսը առւմ է (Պար. Դ. Գլ. ԺԵ.) «Մինչդեռ առաւօտին ազօթքն մատչէին»։

(Իր շարունակուի)

Յուսիկ եպս.

1) Խոր. գիրք Գ. գլ. ԺԳ. Փաւստ. Բիւզ. Պալ. Գ. գլ. ԺԳ.

2) Փաւստ. Պալ. Ե. գլ. ԻԶ.